

# Ararat Magazine

№ 1/7  
7 հունվար, 2009թ.

## Ինչպես ավելի մրցունակ դարձնել Հայաստանը

Մանուկ Չերզնյան, «Տնտեսություն և ամբիգներ» հետազոտական կենտրոնի տնօրեն

**-Ի՞նչ է իրենից ներկայացնում Համաշխարհային տնտեսական ֆորումը: Ե՞րբ է ֆորումը սկսել պատրաստել մրցունակության զեկույցները:**

-Համաշխարհային տնտեսական ֆորումն անկախ, ոչ պետական կազմակերպություն է, որի նպատակը աշխարհի իրավիճակի, մասնավորապես տնտեսական իրադրության բարելավումն է: Սակայն ֆորումը զբաղվում է ոչ միայն տնտեսական հարցերով, այլև ակտիվ է սոցիալական, կրթության եւ առողջապահության ոլորտներում: Ֆորումի ամենահայտնի ծրագրերից է Դավոսյան համաժողովը, որի ընթացքում ամեն տարի հավաքվում են աշխարհի խոշորագույն ընկերությունների ղեկավարները, պետությունների նախագահները, հասարակական առաջնորդներ: Հետաքրքիր երկխոսություն է ընթանում այնտեղ պետական եւ մասնավոր կառույցների միջեւ: Եվ քանի որ ֆորումի ձեւաչափը ոչ ֆորմալ է, տեղի են ունենում կարեւոր հանդիպումներ, որոնք այլ պարագայում գուցե եւ տեղի չունենային:



Անցյալ տարվանից սկսած Համաշխարհային տնտեսական ֆորումը կազմակերպում է նաեւ այսպես կոչված ամառային Դավոս: Այն անցկացվում է Չինաստանում եւ կրում է «Նոր չեմպիոնների հավաք» անունը: Այստեղ են հավաքվում զարգացող երկրների խոշոր ընկերությունների ներկայացուցիչները, ովքեր հնարավորություն են հավակնություն ունեն դառնալու գլոբալ կորպորացիաներ: Անցյալ տարի ամառային Դավոսին մասնակցում էր նաեւ մեր կազմակերպությունը որպես համաշխարհային տնտեսական ֆորումի մրցունակության ցանցի գործընկեր:

Համաշխարհային տնտեսական ֆորումն ունի նաև այլ տիպի նախաձեռնություններ, որոնցից կարելի է ազդեցություն ունենալ մարցունակության ցանցի ստեղծումն է: Հենց այս ծրագրի շրջանակներում են տպագրվում Համաշխարհային մրցունակության զեկույցը եւ ճյուղային մյուս զեկույցները, մասնավորապես համաշխարհային տեղեկատվական տեխնոլոգիաներին, տուրիզմին, գենդերային տարբերությանը, ռեգիոնալ մրցունակությանը վերաբերող զեկույցները:

Համաշխարհային մրցունակության զեկույցը սկսվել է պատրաստվել 1979 թվականից: Հայաստանն այս զեկույցում ներգրավվել է 4 տարի առաջ՝ ստանալով իր ցուցիչը կամ վարկանիշը:

***-Հայաստանի ազգային մրցունակության զեկույցը պատրաստելիս ո՞ր կառույցների տվյալներից եք օգտվում եւ ի՞նչ ուսումնասիրություններ եք անցկացնում: Առանձին ճյուղերի մրցունակության մասին եւս զեկույցներ եք պատրաստո՞ւմ:***

- Համաշխարհային մրցունակության զեկույցում տվյալ երկրի մրցունակության դիրքը ներկայացվում է մյուս պետությունների համեմատությամբ, առանց պատճառահետեւանքային վերլուծության, իրավիճակն ամփոփելով համընդգրկուն ցուցիչ մեջ: Մենք փորձեցինք մեկ քայլ առաջ գնալ եւ ներկայացնել նաև պատճառահետեւանքային կապերը, ցուցաբերել որոշակի մոտեցումներ հնարավոր լուծումների վերաբերյալ: Ազգային մրցունակության զեկույցի պատրաստման գաղափարը ծնվել է հենց այս խնդրից: Այդ առումով օգտվում ենք բազմաթիվ աղբյուրներից, այդ թվում համաշխարհային մրցունակության զեկույցի տվյալներից: Իրականացնում ենք Հայաստանի ղեկավարների կարծիքների ուսումնասիրություն, հարցում ենք անցկացնում շուրջ 100 ընկերությունների շրջանակում: Մանրամասն վերլուծում ենք Հայաստանի դիրքը, օգտագործում ենք ազգային վիճակագրական ծառայության եւ միջազգային տարբեր կառույցների տվյալները: Իսկ ճյուղային զեկույցների հեղինակը համաշխարհային տնտեսական ֆորումն է՝ օգտագործելով համաշխարհային մրցունակության զեկույցի տվյալները: Որոշ մասով մենք մասնակցում ենք նաև այդ զեկույցների պատրաստմանը: Որպես գործընկեր կազմակերպություն, ունենք որոշակի պարտավորություններ այդ տվյալները ներկայացնելու հանրությանը եւ շահագրգիռ կողմերին: Իսկ ազգային մրցունակության զեկույցը մեր կենտրոնի նախաձեռնությունն է եւ ֆորումը ֆորմալ կերպով որեւէ առնչություն չունի:

**- Վերջին տարիներին Հայաստանի արձանագրած տնտեսական աճը շատ փորձագետներ, այդ թվում նաեւ միջազգային, համարում են տպավորիչ: Սակայն Ձեր զեկույցները փաստում են, որ մեր երկիրն ունի ցածր մրցունակություն: Դուք դա բնութագրել եք որպես «աճ-մրցունակություն պարադոքս»: Որքա՞ն ժամանակ եւ ի՞նչ քայլեր են անհրաժեշտ, որպեսզի Հայաստանը հաղթահարի այդ պարադոքսը:**

-Դա բավականին լուրջ խնդիր է եւ Հայաստանի տնտեսության յուրահատկություններից մեկը: Ընդհանուր առմամբ, մրցունակությունն ավելի հիմնարար չափողականություն է, քան տնտեսական աճը: Եթե ավելի մանրամասն դիտարկենք տնտեսական աճի անատոմիան, ապա պարզ կդառնա, որ այն հիմնված է ոչ երկարաժամկետ եւ ոչ շարունակական գործոնների վրա, մասնավորապես դրսից եկող տրանսֆերտների, որն իր հերթին ինչ-որ չափով սնում է շինարարության եւ անշարժ գույքի ոլորտները: Պարզ էր, որ այլընտրանքային ներդրումային ոլորտներ չկային եւ գումարների մեծ մասն ուղղվում էին այդ ոլորտ: Ֆինանսական համաշխարհային ճգնաժամը ցույց տվեց, թե իրականում այս մոդելն ինչքան խոցելի է: Թեպետ Հայաստանի ֆինանսական համակարգն ինտեգրված չէր եւ լուրջ խնդիրներ ֆինանսական համակարգում չառաջացան, այնուամենայնիվ, ճգնաժամն իր ազդեցությունը կունենա Հայաստանի տնտեսության վրա հաջորդ տարվա փետրվար եւ մարտ ամիսներից սկսած: Սա մեր նշած պարադոքսի բացասական հետեւանքներից մեկն է, երբ տնտեսական աճը հիմնված չէ ֆունդամենտալ շարժիչների վրա: Մրցունակության ցուցիչը ցույց է տալիս այդ խոցելիությունը: Ի վերջո, մրցունակությունը համեմատական ցուցիչ է, որը ձեւավորվում է այլ երկրների հետ համեմատության արդյունքում: Իսկ տնտեսական աճը ենթադրում է համեմատում սեփական երկրի այլ ժամանակահատվածի տնտեսական ակտիվությունը նկարագրող ցուցանիշների հետ:

Իրականում մրցունակությանն առնչվող էական խնդիրները կապված են ոչ միայն պետական, այլև մասնավոր սեկտորի հետ: Մասնավորապես մեր ձեռնարկությունների կողմից կատարելագործված ռազմավարության, մարքեթինգային գործիքների օգտագործման, անձնակազմի պատրաստման խնդիրները դեռևս ցածր մակարդակի վրա են: Ազգային մրցունակության զեկույցում որոշակի մոտեցումներ ենք ցուցաբերել այդ խնդիրների լուծման ուղղությամբ: Առանձնացրել ենք գործողությունների 2 ուղղություն՝ առաջինն անվանելով արագ հաղթանակներ, երկրորդը՝ երկարաժամկետ ազդեցության ոլորտ, ինչը նպատակ ունի փոփոխելու ընդհանուր տնտեսական դինամիկայի տրամաբանությունը: Մենք դա անվանել ենք ռազմավարական ճեղքման գործիքներ: Օրինակ, հիմնական խնդիրներից մեկը կապված է ֆինանսական հատվածի հետ: Մասնավորապես, ընդունվող ավանդների եւ տրվող վարկերի տոկոսադրույքների միջեւ տարբերությունը Հայաստանում բավական մեծ է: Բանկային սեկտորի մասնակցությունը տնտեսության մեջ ամենացածրերից մեկն է անցումային շրջանի երկրներում: Այստեղ արագ միջամտության կարիք կա, մասնավորապես վարկերի ընդարձակման, վարկերի մատչելիության եւ դյուրինացման ոլորտում: Մյուս կարեւոր խնդիրը, առանց որի պարզապես

անհնար է մրցունակության բարձրացումը, մրցակցային միջավայրի բարելավումն է: Մի շարք ոլորտներում դոմինանտ խաղացողներ կան եւ հակամրցակցային գործելակերպ է տիրում: Հարկային քաղաքականության բարելավումը կարող է լուրջ ազդակ լինել մասնավոր սեկտորի համար: Անհրաժեշտ է իրականացնել հարկային բեռի նվազեցում, մաքսային ընթացակարգի բարելավում , օտարերկրյա ներդրումների համար հարկավոր է խթաններ սահմանել: Բարձագույն տեխնոլոգիաների ոլորտի վրա իսկապես հարկավոր է ընդգծված շեշտադրում իրականացնել, խրախուսել անհատական համակարգիչների օգտագործումը: Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը խրախուսող օրենսդրություն մշակել: Ի դեպ, հաջորդ Ազգային մրցունակության զեկույցի թեման լինելու է նորարարությունները եւ նորարարական ազգային համակարգի ստեղծումը եւ մենք ավելի մանրամասն կվերլուծենք այս թեմաները: Ջեկույցը նախատեսում ենք հրատարակել եւ ներկայացնել հանրությանը 2009թ. գարնանը:

***-Որքանո՞վ են այդ առաջարկները համապատասխանում Հայաստանի կառավարության կողմից իրականացվող քաղաքականությանը եւ որքանո՞վ են դրանք հաշվի առնվում կառավարության կողմից:***

-Ազգային մրցունակության զեկույցը չենք դիտարկում որպես զուտ փաստաթուղթ: Սրան նախորդել են քննարկումներ նաեւ պետական կառույցների ներկայացուցիչների հետ: Ջեկույցի շնորհանդեսին էկոնոմիկայի նախարարը հայտարարեց, որ զեկույցի որոշ գաղափարներ արդեն ներառված են կառավարության ծրագրերում: Իհարկե, քննադատելը հեշտ է, դժվարը իրականացնելն է: Տնտեսական համակարգը ունի բավականին մեծ իներցիա, սակայն միեւնույն ժամանակ տնտեսական գործակալները բավականին լավ տարբերակում են իրական քայլերը իմիտացիայից: Սա կառավարությանը հնարավորություն է տալիս մի քանի իրական քայլերի միջոցով հասնել բիզնեսի կողմից տնտեսական միջավայրի վերաբերյալ ընկալումների փոփոխության: Փոփոխությունների մտադրություն կառավարությունն ունի,, սակայն իրական արդյունքի նվաճման ընկալումը բիզնեսը դեռեւս չունի: Այդ մտադրությունը բիզնեսը դեռեւս չի ընկալել որպես իրական փոփոխությունների սկիզբ: Կարծում են, որ, ընդհանուր առմամբ, կառավարությունն իր մտադրություններում ազնիվ է: Սակայն պետք է հասկանալ, որ կառավարությունն էլ համասեռ կառույց չի, ունի իր ներքին շահերի դիմամիկան: Սակայն եթե այսօրվա միտումները շարունակվեն եւ իրական փոփոխություններ չկատարվեն, ապա կհայտնվենք ավելի վատ պայմաններում, քան մեկնարկայինն էր: Մարդկանց մոտ հուսալքության երկրորդ ալիքը կարող է բարձրանալ. բիզնեսը շատ սուբյեկտիվ է եւ հիմնված է սպասումների վրա:

**- Միջազգային ֆինանսական ճգնաժամը , կարելի է ասել, արդեն հասել է Չայաստան:  
Մասնավորապես, մետաղների միջազգային գների անկումը դժվար կացություն է ստեղծել մեր  
հանքարդյունաբերական ձեռնարկությունների համար: Միջազգային ճգնաժամն ի՞նչ  
ազդեցություն կարող է ունենալ մեր երկրի մրցունակության վրա:**

- Ամենայն հավանականությամբ շոշափելի ազդեցություն կունենա տնտեսական աճի վրա, բայց մրցունակությունը պայմանավորող հիմնարար գործոնների վրա էական ազդեցություն դժվար թե ունենա: Ընդհակառակը, ի հայտ կբերի այն խնդիրները, որոնք էական են շարունակական մրցունակության համար, սակայն որոնք դժվար նշարելի են, երբ արձանագրվում է երկնիշ տնտեսական աճ:: Այս իրավիճակը պետք է ճիշտ օգտագործել եւ հասցեագրել տնտեսության հիմնարար խնդիրները, որոնք ավելի մեծ սրությամբ եւ հրատապությամբ ի հայտ են գալիս:

**-Տարածաշրջանի երկրների համեմատությամբ մեր երկրի մրցունակությունն ի՞նչ դիրքերում է:**

-Մրցունակությամբ բավականին զիջում ենք Ադրբեջանին: Ադրբեջանի նավթային սեկտորը միջազգայնացված է եւ այստեղ գործում են խոշոր կորպորացիաներ, որոնք բերում են կառավարման նոր համակարգ: Տնտեսության միջազգային ընդգրկումն ավելի բաց է դառնում եւ մրցունակության ցուցիչը բարձրանում է: Վրաստանը Չայաստանի հետ համեմատած գրեթե նույն դիրքերում է, թեպետ վերջին շրջանում այս երկրում էական փոփոխություններ կան բիզնեսի կարգավորման դաշտում:

**-Տնտեսական հետազոտությունները որպես ինստիտուտ Չայաստանում կարո՞ղ եք կայացած համարել: Ուրիշ ի՞նչ կառույցներ կան, որոնք իրականացնում են տնտեսական հետազոտություններ եւ զերծ են կոնյուկտուրային ազդեցություններից:**

- Դժվար է գնահատել մյուս կառույցների կախվածության աստիճանը: Սակայն կարծում են, որ Չայաստանում կան ինստիտուտներ, որոնք զբաղվում են տնտեսության պրոֆեսիոնալ ուսումնասիրությամբ: Սակայն դրանք դեռեւս չունեն այն դերն ու նշանակությունը քաղաքականության մշակման մեջ, ինչը զարգացած երկրներում ունեն ասպետ կոչված մտավոր կենտրոնները (think-tanks):